

## ԳՐԱԲԱՐԻ ԽՈՆԱՐՅԱՆ ՄԻ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### Գ. Կ. ՀԱՆԱՆՅԱՆ

Հայերենի *երդում* բառը ավանդված է հնագույն շրջանից: Հր. Աճառյանի ստուգաբանությամբ այն հնդեվրոպական \*ertu արմատից է. հայերենում այն պահպանվել է նույն իմաստով: Բառը իր զանազան դրսևորումներով լսող է հայերենի պատմական ու տարածքային բոլոր տարբերակներում:

Հայկազյան բառարանը<sup>1</sup> տալիս է այդ բառի նույնարմատ 28 ձև, որոնցից 5-ը բայեր են, 13-ը՝ ածականներ, 10-ը՝ գոյականներ, ընդ որում *երդմնեցուցիչ* բառի դիմաց կա երկու նշում՝ ածական, գոյական (երկու դեպքում էլ՝ ի-ա խառը հոլովմամբ):

*Երդնի* բառի բնագրային վկայությունների մեջ Հայկազյան բառարանում տրված են նրա հոգնակի երկու ձևեր՝ երդնեացն և երդմնելեացն («Ոչ եթե երդնեացն զօրութիւն»): այլ ձ. երդմնելեացն, կամ՝ երդնելեացն), որոնցում առաջին բաղադրիչներն են երդն- և երդմն-:

Հր. Աճառյանը Արմատական բառարանում<sup>2</sup> բերում է երդումն գոյական բառածևից առաջացած *երդնուլ, երդումնել, երդմնեցուցանել, երդմնեցուցութիւն, երդմնի, երդմստութիւն, ստերդումն, երդմնազանց, երդմնակեր, երդուիլ, շատերդումն, երդմնադրուժ* ձևերը: Նկատելի է, որ վկայված բոլոր բառածևերում իբրև արմատական տարր հանդես է գալիս *երդու-* բաղադրիչը: Ըստ Աճառյանի՝ ավանդված է նաև գավառական *երդուրնալ* ձևը: Այստեղից նա եզրակացնում է, որ «... *երդնուլ* ծագում է հնագույն \**երդումուլ* բայից և *երդումն* հնագույն \**երդումումն* ձևից»<sup>3</sup>:

Աճառյանը նկատում է, որ \*ertu- > *երդու-* արմատը ավանդված է երկու տարբեր ածանցումներով՝ -(ու)ն և (ում)ն: Այստեղ հասկանալի չէ, թե որտեղի՞ց է գալիս Աճառյանի դիտարկած *ումն* ածանցի ու-ն: Իսկ ավանդված գավառական *երդուրնալ* ձևը ենթադրել է տալիս \**երդումումն* գոյական նախածև:

Այս բառի ածանցական երկու ձևերն էլ առկա են հայերենի բոլոր բարբառներում: Այսպես. գոյական *երդումն* ձևին համապատասխանում են՝ Ազլ. եօդում, Ալշ. էրտում, Ախց., Տգր., Պլ. էրթում, Ակն., Ասլ. էրթում, Առտ. յերդ'ում, Արեշ ծրդում, Գրս. ուրթումնը // ուրթում // ծրթումնը, Եդս. էրթում, Չթ. ուլդ'ոմ, ուրդ'ոմ, իլդ'ոմ, Թբ. օրթում, Կր. էրթումք, Հնշ. էշթումք // էշթվոմք, Հճն. ուլտում, Դրբ. ուրթումնը // ուրթումնը, Մկ. հերտում, Մշ. յերթում, Մղր. ուրդում, Մրդ. ծրթում, Մրշ. ըրդտումք (պահպանել ենք հեղինակի՝ Գ. Գալուստյանի գրադարձությունը. ըստ բարբառային ընդունված գրադարձության՝ ըրդտումք - Գ.Հ.), Ննխ. էրթում // էշթում, Ծմ. վերթում, Ծտ. հերտում,

<sup>1</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, էջ 675-676, 745:

<sup>2</sup> Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. II, Եր., 1973, էջ 44:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 44:

Ոգն. հերոսն, Ջուդ. փորդ'ում, Սլմ. էրթնմ // օրթնմ, Սվ. (Խտբ.)՝ ուփտոսում // (Հճհ.) ուփդ'ոսմ // (Քար) ուփտոսում // ուփտըմայն, Վան էրտնմ, Քես. ուվ-տոսմ:

Բառի բարբառային բայական ձևերից են՝ Ախց. էրթնմալ, Երզ. էրթ-ֆրնմալ, Ջթ. օյդ'վօսու // օրդ'վօսու, Խրբ. էրթունմալ, Հմշ. էշթվընմալ // էշթվընուլ, Հնգ. էրֆրնալ, Լհ. էրդվընալու, Սկ. հերտըվնալ, Մշ. երդըվնալ, Մրշ. ըրդուրննիլ, Շտ. հերտըվնալ, Ոգն հերթվանալ, Պշ. էրթվընմալ, Ջդ. փորդըմվել, Սլմ. ծրթնվել, Սշ. էրֆրնալ, Սվ. (Խտբ., Քար.) ուփտըննիլ//ուփ-տըննիլ// (Հճհ.) ուփտըվնիլ// (Արամո) ըֆտըրննեյլ, Տգր. էրթըմննալ/էրթըվննալ, Քես. ուվտըննիլ և այլն:

-Ումն անանցումով ձևից առաջացել են Տիգրանակերտի, Խարբերդի, Ախալցխայի և Ջուդայի բայական ձևերը, -\*ուն-ով ձևից՝ մնացած բարբառ-ներինը:

Պարզ, արմատական ձևով \*ertu- > *երդու-* ն հանդես է գալիս հետին *եր-դուիլ*, աշխարհաբար *երդվել* և Սալմաստի բարբառի *ծրթնվել* բառերում:

Այսպիսով, հնդեվրոպական \*ertu արմատը հայերենում վկայված է -(ու)մն, -(ու)ն անանցումներով և պարզ, արմատական ձևով:

*Երդնուլ* բայը գրաբարի դասագրքերում մերթ դիտված է իբրև *ու* լծոր-դության անանցավոր բայ, մերթ էլ՝ անկանոն բայ<sup>4</sup>: Երկու դեպքում էլ խո-նարհման հարացույցներում այն դրսևորում է շեղումներ գրաբարի խո-նարհման կանոնական ձևերից: Իբրև *ու* լծորդության անանցավոր բայ՝ անցյալ կատարյալի հիմքում այն պիտի ունենար \*երդ ենթադրյալ հիմքը: Բայց խոնարհման հարացույցում այն հանդես է գալիս *երդու-* հիմքատար-բերակով, որը և բառի ստուգաբանական նախածնն է: *ւ-*ն ներկայի հիմքում այս դեպքում գիտակցվում է իբրև սոսկածանց, ուստի և խոնարհվում է կրա-վորակերպ. \* երդունուլ > երդնուլ (*ու*-ի անկումը շեշտագրկման հետևանք է):

*Երդնուլ*-ի պատճառական ձևը գրաբարում լինում է *երդմնեցուցանել*, այսինքն՝ բայը գիտակցվում է բայակազմորեն իբրև պարզ բայ, որի ոչ պատճառականի համար վերականգնելի է \*երդումնել, որը վկայված է Ար-մատական բառարանում, *երդմնել* ձևով՝ Հայկազյանում և էրթնմալ, էրթըմ-նուլ, էրթումնել համապատասխաններով՝ Ախալցխայի, Տիգրանակերտի, Խարբերդի բարբառներում:

Խոսելով հնդեվրոպական \*m > մն հնչյունակապակցության՝ որոշ դեպքերում *մ* համապատասխանության մասին, Անտուան Մեյենն ճշում է. «Բառամիջում *ա* և *ի* ձայնավորից հետո \*m հնչյունախումբը հեշտ բա-ցատրվող մի փոփոխությամբ հանգել է *ու*-ի. այսպես գտնում ենք՝ *պաշտան*, սեռ. *պաշտաման*, *մրջին*, սեռ. *մրջման*, *գոչին*, սեռ. *գոչման*: Սակայն հնդեվրոպական \*u-ից հետո \*m-ն պահպանվում է. այսպես *շարժումն* տի-պի *-ումն* վերջնահանգով գոյականներում: Ընդհակառակն, հնդեվրոպական

\* Փակագծերում խոսվածքներն են նշված:

<sup>4</sup> Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, Եր., 1971, էջ 98, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Գրաբարի ձևաբանություն, Եր., 2001, էջ 155, Պ. Շարափյանյան, Գրա-բարի դասընթաց, Եր., 1974, էջ 199:

\*օ-ից ծագած *ու*-ին հաջորդելիս *ու*-ն դարձել է *ւն*, որ վերածվել է *ու*-ի. *անուն*-ը հունարեն *ὄνομα*-ի դիմաց ծագել է *անուն*-ից (\*onomno)»<sup>5</sup>:

*Մ*-ւ անցում է ընդունում նաև ակադ. Գ. Ջահուկյանը հայերեն *աւր* (սեռ. *աւուր*) բառի հոլովման և հնդեվրոպական - \*men (-\*mon, -\*mn) մասնիկի՝ հայերեն իրացումների մասին խոսելիս: *Աւր*-ը բացատրվում է իբրև \* ֆոնո-ից *ու*-ի հնչյունափոխությամբ առաջացած ձև, իսկ -\*mn>-մն-ի մասին գրում է, որ այն լայն տարածում է տացել՝ «...միանալով \*a, \*i, \*u տարրերի հետ. առաջին երկու դեպքում առկա են -*աւն* (<\*a -mn), *իւն* (<\*i-mn) մասնիկները (հմմտ. պաշտաւն, մրջիւն), երկրորդ դեպքում՝ *ոււն* մասնիկը (հմմտ. *erthu* + մն > երդումն)»<sup>6</sup>:

Ինչպես նկատելի է, Ջահուկյանը չի բացատրում, թե ի՞նչ են հիշյալ \*a, \*i, \*u տարրերը: Չի խոսվում նաև երդումն-ի բայական բառաձևերի մասին:

«Հին հայերենի -իւն (-եան, -ուն) -ուան հոլովումը»՝ հողվածում ակադ. Է. Աղայանը հայերենի -իւն գոյականակերտ ածանցը դիտում է իբրև բաղադրյալ կազմություն՝ հնդեվր. i-ով բների բնային i > ի ձայնավորի և ven ածանցի միջին ձայնդարձի՝ սո> ուն ձուլման արդյունք: Այսպես են առաջացել նաև, ըստ նրա, ածանցի -*ամն*, -*ումն* տարբերակային ձևերը՝ համապատասխանաբար \*men հայերեն ածանցի ստորին ձայնդարձից, որոնցում բուն ածանցական տարրը -*մն*-ն է, (-*ա*-ն և *ու*-ն նախնական ձայնավոր բների արտահայտությունն են):

Ելնելով *մրջիւն* // *մրջիւն*, *պաշտաւն* // *պաշտամն* (ըստ *պաշտաման* սեռականի վերականգնելի), *անու(ւ)ն բրբռ. անում(ն)*, \**մահոււն* (ըստ *մահուան* սեռականի վերականգնելի) // \**մահումն* (ըստ բրբռ. *մահման*, մայման ձևերի վերականգնելի) զուգահեռ ձևերի առկայությունից՝ Աղայանը ենթադրում է, որ հնդեվր. նախալեզվում եղել է men ածանցին զուգահեռ ven համանիշ ածանց, որի ձայնդարձի տարբեր աստիճաններից էլ հայերենում առաջացել են վերոհիշյալ բառերի զուգահեռ ձևերը:

Հնդեվր. \*men // ven ածանցի զուգորդումներից առաջացած վերոհիշյալ զուգաձևերին մենք ավելացնում ենք նաև *երդումն* գոյականը, որի համար ենթադրելի է նաև \**երդումն* > \**երդումն* > \**երդումն* զուգահեռ կազմություն, որը և հանդես է գալիս *երդնուլ* (<*երդումնուլ*) բայի կազմության մեջ: Խոնարհման համակարգում *երդում* -*երդն* հիմքով այն գործառու է ներկայի, իսկ -*երդու* արմատական տարբերակով՝ կատարյալի հիմքից կազմված հարացույցներում:

\*սո> ն ածանցի նախնական՝ բայանվանակերտ իմաստի հետագա մթազմումը հանգեցրել է նրան, որ *ու*-ի անկումով *ու*-ն գիտակցվել է հիմքակազմ ձև, բայը դիտվել է ածանցավոր (*երդն*- հիմքով) և արդեն իբրև ածանցավոր բայ՝ խոնարհվել է կրավորակերպ:

<sup>5</sup> Ա. Մեյլե, Դասական հայերենի համեմատական քերականութան ուրուագիծ, Ժնև, 1988, էջ 34:

<sup>6</sup> Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 257:

<sup>7</sup> Տե՛ս Է. Աղայան, Հին հայերենի -իւն (-եան, -ուն) -ուան հոլովումը, «Հանդես ամսօրեայ», 1987, էջ 623-627:

Նոր հայերենում և Սալմաստի բարբառում առկա երդու-ել, -իլ ձևերը կազմությամբ պարզ բառաձևեր են, և իբրև այդպիսիք խոնրահվում են ներգործակերպ: Այս վերջին կազմությունները, կարծում ենք, ավելի նախնական են ու հնատիպ:

Ինչպես գրական, այնպես էլ բարբառային բայանուն կազմություններում ավելի մեծ կենսունակություն է դրսևորում *-(ու)մն* ածանցը, իսկ բայակազմության մեջ՝ *-(ու)ճ* ածանցը: *-(ու)մն* ածանցով ավանդված են մեզ հայտնի բարբառներից Տիգրանակերտի, Խարբերդի, Ախալցխայի, Ջուղայի բայական կազմությունները:

Պարզ, արմատական *երդու-* տարբերակով ձև, ինչպես արդեն նշել ենք, ըստ Աճառյանի ներկայացրած բարբառային վկայությունների, առկա է միայն Սալմաստի բարբառում՝ *ծրթիւվել* (Աճառյանի գրադարձությամբ՝ *տրթիւվել*):

Արմատական տարբերակն է պահպանված նաև արդի գրական հայերենի տարբերակներում (*երդուել* > *երդվել*, *երդուիլ* > *երդվիլ*): Այս կազմություններում այն արդեն խոնարհման անկանոնություններ չի դրսևորում:

Այսպիսով, *երդնալ* բայի անկանոնությունը պայմանավորված է բայահիմքի տարածև կազմություններով, իսկ այդ տարածևությունը գրական լեզու թափանցած տարածքային տարբերակվածության արտահայտություն է, որը բավականին մեծ հնություն ունեցող իրողություն է:

Այս բացատրությունից հետո կարելի է ներկայացնել նաև հնդեվր. \*men և \*ven ածանցների տարածական բնութագիրը հայերենի բարբառային դրսևորումներում և սրանց գործառությունների հաճախականությունը:

#### Г. К. ГАНАНЯН — Об одном неправильном спряжении *грабара*. —

Начиная с древнейших времен, традиционно глагол *երդնուլ* в парадигме спряжения *грабара* использует три основы: *երդն-*, *երդու-*, *երդմն-* (в каузативных формах глагола). Гр. Ачарян в «Этимологическом словаре армянского языка» приводит также письменные свидетельства *երդումն* — (ել) литературной и *երդուրն* — (ալ) диалектной форм. Глагол *երդնուլ* в *грабаре* имел неправильное спряжение. Отклонения в спряжении объясняются альтернацией индоевропейских синонимичных суффиксов \*men и \*ven в отглагольных существительных. Наиболее существенным представляется то, что впоследствии с утратой словообразовательной роли суффикса \*ven >ւն >ն привело к восприятию ն как основообразующего элемента. Одновременно существовали этимологическая (\*ertu>երդու) и производная (երդումն) основы. Данная вариативность основ, которая проникла в литературный язык из диалектов, обусловила неправильность спряжения глагола *երդնուլ*.